|-----------------------------------|---------------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|
| Մինչև 2 դեսիարին ցանքս ունեցող | 74 ₉ | 37 ₇ | 68 ₃ | 36 ₀ | 29 ₁ |
| 2,1—4 > > > | 36 ₁ | 12 ₀ | 34 ₈ | 10 ₁ | 8 ₀ |
| 4,1—6 > > > | 13 ₄ | 5 ₆ | 17 ₄ | 2 ₆ | 2 ₄ |

Ուկրաինայում 1925 թ. վարձու լծկանից և ինքենարից ոգտվող տնտեսությունների ամբողջ թվից $86,9^0/0$ ընկնում եր լծկանաղուրկ տնտեսությունների խմբերին: Տնտեսությունների այդ խմբում $78,3^0/0$ -ը հերկը մշակում եր վարձու լծկանով և ինքենարով: Սամարայի նահանգի մի գավառակում լծկան և ինքենար վարձող ամբողջ տնտեսությունների թվից $70^0/0$ -ը գալիս է մինչև 500 ուռելի արժողությամբ արտադրության միջոցներ ունեցող տնտեսություններին: Այս բոլորը ցուց ե տալիս, վոր գյուղում տեղի ունեցող լծկան և ինքենար վարձելը հետևանք ե այն բանի, վոր մանր և մանրագույն տնտեսություններն արտադրության միջոցներ չունեն:

Լծկանաղուրկ տնտեսությունների թվի վորշակի լեռացող կրճատման հետևանքով սկսվում ե կրճատվել նաև այն տնտեսությունների տոկոսը, վորոնք հողը մշակում են վարձու լծկանով և ինքենարով: Այսպես՝ Ուկրաինայում վարձու լծկանով հողը մշակող տնտեսությունների տոկոսը հավասար է լեզել 1924 թ. 38,0-ի, 1925 թ.՝ 38,2-ի, 1926 թ.՝ 36,6-ի:

Վարձու ինվենտարով հողը մշակող տնտեսությունների տոկոսը հավասար է լեզել 1924 թ.՝ 40,0-ի, 1925 թ.՝ 39,7-ի, 1926 թ.՝ 38,8-ի:

Պարզ կերպով նկատվել ե լծկան և ինքենար վարձող տնտեսությունների տոկոսի կրճատում:

Բնական ե, վոր լծկան և ինքենար վարձու տոկոներն այն տնտեսություններն են, վորոնց տրամադրության տակ են գտնվում գրանք: Այդ բանը պարզ կերպով պատկերացնում են իրանց չափերով տարբեր տնտեսությունների վարձատվությունից ստացվող լեկամտի վերաբերյալ հետևյալ տվյալները:

| ԽՄԲԵՐՆ ՀՍՏ ար- տադրության մի- ջանակության մի- ջան | ՀԱՅԱՀԱՅ | ՀԱՅԱՀԱՅ | ՀԱՅԱՀԱՅ | ՀԱՅԱՀԱՅ | ՀԱՅԱՀԱՅ |
|--|-----------------|------------------|-----------------|-----------------|-----------------|
| 0—250 սուբլի | 1 ₅ | 11 ₆ | 0 ₄ | 2 ₇ | 1 ₂ |
| 250—500 | 4 ₁ | 35 ₅ | 3 ₈ | 25 ₃ | 13 ₀ |
| 500—800 | 5 ₃ | 52 ₂ | 13 ₂ | 26 ₁ | 21 ₃ |
| 800—1400 | 39 ₆ | 98 ₇ | 53 ₁ | 40 ₀ | 35 ₁ |
| 1400 սուբլուց ավելի | 27 ₂ | 126 ₇ | 26 ₄ | 72 ₈ | 28 ₈ |

Ինչպես տեսնում ենք, լծկանի և ինքենարի վարձատվությունից ստացվող լեկամուտը քիչ թե շատ նշանակություն ունեցող լեկամտի աղբյուրի դեր ե խաղում միայն միջակից բարձր և խոշոր տնտեսություններում, այսինքն այն տնտեսություններում, վորոնք արտադրության միջոցների պակասություն չունեն: Միջակից բարձր տնտեսությունների խմբում վարձատվությունից ստացվող լեկամուտը կազմել է

տնտեսության պայմանական՝ դուռ արդյունքի՝ $70/0$
Տամրովի նահանգում, $5,70/0$ Ուկրայնալի անտառա-
վայրում, $160/0$ Ուկրայնալի դաշտավայրում, $70/0$ Նոր-
սիբիրյան շրջանում: Խոշոր տնտեսությունների խմբում
այդ յեկամուտը կազմել է—Տամրովի նահանգում $50/0$,
Հյուսիսային Կովկասում $5,0/0$, Ուկրայնալի անտառա-
վայրում $80/0$, Ուկրայնալի դաշտավայրում $120/0$ և Նոր-
սիբիրյան շրջանում $90/0$: Ինչպես տեսնում ենք, Ծծկան
և ինվենտար վարձու տալուց սահցվող յեկամուտը բա-
վական մեծ տեղ է բռնում միջակից բարձր և խոշոր
տնտեսություններում:

Ծծկանի և մեքենալի միջոցով չքավորական և
սակավագոր տնտեսություններին հարստահարելու դեմ
մղվող պայքարում խորհրդային գյուղում սկսում են
ավելի ու ավելի մեծ տեղ բռնել պետական և կոոպե-
րատիվ վարձատու կայանները: XV Համագումարը նշել
է, վոր

«... պետական և կոոպերատիվ վարձատու
կայանները, վորոնք ոժտված են հարկավոր քա-
նակությամբ գյուղատնտեսական բարդ մեքե-
նաներով, և վորոնք ուղիղ քաղաքականության
դեպքում ծառայում են վորպես աչքի ընկնող
ֆակտոր (գործոն) այն պայքարի մեջ, վոր մըր-
գում ե՝ կուլակության ձեռքով գյուղացիության
չքավորական և սակավագոր խավերը հարստա-
հարելու դեմ...», հանդիսանում են վորպես գյու-
ղացիական տնտեսությունների վրա ծրագրայնո-
րեն ազդելու միջոց, «... այլև վորպես նոր տեխ-
նիկալի հիմունքով հողը մշակելու կոլեկտիվ
ձեռքին անցնելը խթանող ֆակտորներ»:

Այսպիսի հյական նշանակություն տալով՝ կուլա-
կության ձեռքով գյուղացիության չքավորական և սա-
կավագոր խավերը հարստահարելու դեմ մղվող պայ-
քարի այս ձևերին, XV Համագումարը կոոպերացիայի
կարեռագույն գործնական խնդիրների մեջ ուշադրու-
թյուն է գարձրել, վոր անհրաժեշտ ե
«ուժեղացնել պայքարը, վոր մղվում և ազատե-
լու համար սակավագոր ինվենտարագուրկ գյու-
ղացիական տնտեսությունները կուլակային տար-
րից ունեցած կախումից, տարրի, վոր իր ին-
վենտարը (գյուղատնտեսական մեքենաները և
այլն) ոգտագործում և չքավորությունն ստրկաց-
նելու համար. այդ նպատակով գյուղատնտեսա-
կան կոոպերացիայում՝ պետականների հետ միա-
սին՝ ծագալի վարձատու կայանների ցանցը, վո-
րոնք սակավագոր տնտեսություններին մեքենա-
ներ են վարձու տալիս ձեռնտու պայմաններով
և նպաստում են հողի մշակման, հնձի և այլն
համայնական ձևերի զարգացմանը»:

Ամեն կերպ թեթևացնել կուլտանտեսու-
թյուններին և սակավագոր գյուղացիներին մե-
քենաներ հալթալթելը, հատուկ արտօնություն-
ներ մշակելով վարկի, վճարելու պայմանների
վերաբերյալ և այլն: Սահմանափակել կուլակային
տարրերին գյուղատնտեսական մեքենաներ հայ-
թալթելը՝ դրա համար համապատասխան չափեր
(սորմաններ) մշակելով (վաճառվող մեքենաների
ընդհանուր քանակից կուլակների բաժնի պակ-
սեցում, կանխիկ վճարում և այլն):»:
Այս միջոցների վճռական կիրառումը չքավորա-

կան սակավագոր տնտեսությունների ընդհանուր ամերացման և նրանց կողմեկտիվացման հետ միատեղ այն հետեւանքին կհասցնի, վոր նշանափոր չափով կկրծառվի լծկան և ինվենտար վարձելը։ Դրանով եւ աչքի ընկնող չափով կսահմանափակվի կուլակալին շահազործման ասպարեզը։

VI.

Մենք մանրամասն վերլուծեցինք դասակարգացին հարաբերությունները խորհրդալին գյուղում, նրանց տարածման և զարգացման աստիճանը նեպի տարիներում։ Բայց ի՞նչքան են և ի՞նչ ուժ ունեն առանձին առանձին դասակարգերը գյուղում։

ԺԿԽ-ի հանձնաժողովը, վոր հատկապես մշակել և ԽՍՀՄ ազգաբնակության թվաքանակի և չեկամուռների հարցը, հաշվել ե գյուղի հիմնական դասակարգերի փոխարարերությունը։ Այդ հանձնաժողովն ամբողջ յերկրագործ ազգաբնակությունը բաժանել ե 3 հիմնական խմբերի. 1) պրոլետարիատ, 2) ժամկետային բանվոր չվարձողներ, վորոնք իրանց հերթին բազկացած են յերկու խմբից՝ չքափոր և միջակ, և 3) ժամկետային բանվոր վարձողներ։

Հողագործ ազգաբնակության բաժինումը 0/0%-ով։

| Տնտեսությունների խմբերը | 24/25 թ. | 25/26 թ. | 26/27 թ. |
|---------------------------|-----------------|-----------------|-----------------|
| 1. Պրոլետարիատ | 4 ₄ | 5 ₀ | 5 ₃ |
| 2. ժամկետով բանվ. չվարձող | | | |
| ա) չքափորական խմբեր | 24 ₀ | 21 ₆ | 20 ₄ |
| բ) միջակային խմբեր | 64 ₇ | 6 ₈ | 66 ₄ |
| 3. ժամկետով բանվ. վարձող | 6 ₉ | 7 ₆ | 7 ₉ |
| Հողագործ | 100 | 100 | 100 |

Տնտեսությունների բաշխումն այս խմբերի մեջ է բնում և նախընթաց եջի աղյուսակից:

Գյուղում կենտրոնական տեղը բանում և միջակային խումբը, վոր նշանավոր չափով աճել և հեղափոխության տարիներում և խոշորացրել իր նշանակությունը ներքի տարիներում: Միանդամայն եական իրողություն են չքավորական խմբի կրծատման ուղղությամբ պարզ նկատվող տեղափոխությունները (մի խմբից մյուսի մեջ անցնելը):

Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացնելով ճորտատիրական շահագործումը, կիսաճորտատիրական շահագործումից ազատել և վոչ միայն միջակային տընտեսությունները, այլ և չքավորության բավականաչափ խմբեր: Դրա հետ միասին չքավորությանը և միջակային տնտեսություններին ցուց արված ոժանդակությունը չքավորական տնտեսությունների ամրապնդման, նրանց գույքալին աճման և չքավորության թվաքանակը փոքրանալու համար հող և ստեղծել Բարձրացել և պրոֆտարիատի նշանակությունը, մյուս կողմից ել մեծացել և ժամկետով բանվոր վարձող տնտեսությունների թվաքանակը:

Ինչպես իրավագիրեն ընկ. Մոլոտովն է մատնանշել իր զեկուցման մեջ XV Համագումարում, անշուշտ վոչ այս բոլոր տնտեսություններն են կարող համարվել և չպիտի համարվեն կուլակային տնտեսությունների խմբի մեջ: Դրա հետ միասին այս խմբի աճուրդը տնտեսությունների տեսակաբար կշռի մեծացումը, թեև դրանց նշանակությունը հեռու յե այն դերից, վոր ոպպոզիցիոն տնտեսագետներն ենին վերագրում գտուղի կուլակային տարրերին: Դեր-

ջինս կարելի յե ստուգել նաև անտեսությունների առանձին-առանձին խմբերի միջն յեկամուտները բաշխելուց:

Հողագործ ազգաբնակության յեկամուտների բաշխումը 0/0 0/0-ով

| Տնտեսությունների խմբերը | 24/25 թ. | 25/26 թ. |
|---------------------------|-----------------|-----------------|
| Պրոլետարիատ | 3 ₉ | 4 ₃ |
| Չքավորական խումբ | 20 ₁ | 17 ₉ |
| Միջակ | 63 ₆ | 64 ₃ |
| Ժամկետով բանվոր վարձողներ | 12 ₄ | 1 ₅ |
| Ընդամենը | 100 | 100 |

Եեկամուտների բաշխումը նույնպես ցուց է տալիս միջակային տնտեսությունների վճռական և մեծացող զերը խորհրդացին գուրզում: Դրա հետ միասին տեսնվում է նաև ժամկետով բանվոր վարձող տնտեսությունների գերը, վորոնց մեջ, ինչպես վերը մատնանշված է, քիչ չեն նաև միջակային տնտեսությունները: Այդ տնտեսությունները (ժամկետով բանվոր վարձող) իրանց ձեռքում են կենտրոնացնում հողագործական ազգաբնակության յեկամտի 1/8-ը, իրանքիներով այդ ազգաբնակության 1/13 մասը:

Այդ տնտեսությունների թվաքանակի համեմատ յեկամտի այդ մեծ բաժինը կատարելապես բնական է, վորովհետև այստեղ անկասկած առավել խոշոր տնտեսությունների մեծամասնությունն է մտնում, վորոնց յուրաքանչյուր տնտեսությունը համեմատաբար բարձր յեկամուտ է բերում: Ինչպես տեսնում ենք,

թե խոշոր տնտեսությունների թիվը, և թե յեկամուտաների բաշխման մեջ նրանց ունեցած նշանակությունը ցուց են տալիս, վոր ճիշտ չե ոպպողիցիալի այն պնդումը, թե «գուղում կապիտալիզմը մեծ արագությամբ աճում է»:

Վորպեսզի ավելի ճշգրիտ պարզաբանենք խմբերի փոխարարերությունը մեր գյուղում մինչպատերազմանի համեմատությամբ, լուսաբանության համար կենտրոնական-սեահողալին շրջանի չորս գավառակներում մինչեղափոխական շրջանում և ներպի տարիներում տնտեսությունների բաշխման և արտադրության միջոցները նրանց մեջ բաշխելու վերաբերյալ տվյալներ բերենք: Անկասկած ե, վոր այդ տվյալներն ամբողջ Խորհրդային Միության տարածության վրա յեղող հարաբերությունների բնույթի ապացուց չեն դեռևս: Ինչպես միանգամայն իրավացի կերպով ընդգծել ե ընկ. Մոլոտովը իր զեկուցման մեջ,

«... ներկա դեպքում «գուղ» խոսքն ընդգրրկում ե մեր գյուղացիական կյանքի ծայրանեղ բազմազան պայմանները: Հիրավի մենք ունենք մեր կենտրոնական գյուղը, ուկրայնական մեծ գյուղը, հարավի ստանիցան (պազախի շենք), առուլը (կովկասյան լեռնաբնակների գյուղը), դշլաղը (վաշկատուն ցեղերի ձմեռանոցը) և այլն,—միենույն այս թվումը բավական ե հասկանալու համար, թե վորքան բազմազան են այն պայմանները, վորոնց մասին հարկ ե զգացվում ճիշել գյուղում աշխատելու հարցը քննելիս:

Միապաղադ գյուղ չկա: Այլ կա գյուղը, վորն ունի ահագին քանակությամբ յուրահատուկ գծեր—

սոցիալական, շվահային-տնտեսական, ազգային և այլն: Բավական ե միայն ճիշել, վոր ըոլորովին նորերս, միայն յերկու տարի առաջ ե Միջին Ասսիայի մի շաբք շրջաններում հողա-ջրալին բարեհորոգում մուծված, հասկանալու համար, վոր մենք դեռ ենք ստիպված արմատախիլ անել ամար կանության մնացորդները, նահապետական-ցեղալին կենցաղաձևի մնացորդները»:

Միության մասերից մեկում յեղած հարաբերությունների զարգացումը քննելով՝ այնուամենայնիվ մենք զաղափար կկազմենք և մուս մասերի զարգացման ընթացքի վերաբերյամբ, վորովհետեւ, ինչպես նկատել ե ընկ. Մոլոտովը նույն զեկուցման մեջ,
«... Խորհրդային Միության ինչ շրջան կամ ազգային հանրապետություն ել վոր վերցնելու լինենք, կտեսնենք, վոր ալժմ նրանց համար արմատական տարրերություններ են ստեղծվել զարգացման մեջ մինչեղափոխական ժամանակի համեմատությամբ: Պրոլետարական իշխանությունը գլուղի տնտեսական, սոցիալական և կուլտուրական-քաղաքական պայմանների մեջ հաստատել ե այն արմատական տարրերությունը, վորը կատարելապես նոր ուղի յե սահմանում խորհրդացին գյուղին»:

Վորպեսզի ստանանք տնտեսությունների խմբեր, վորոնք ավելի յեն մոտենում իրանց բաժանմանն ըստ գյուղատնտեսական արտադրության չափերի, մենք զյուղատնտեսական արտադրության չափերի, մենք զատեցինք տնտեսությունների հինգ խումբ հետևյալ նշաններով.

I. լծկանից և արորից զուրկ տնտեսություններ:

II. լծկանագուրկի, բայց արոր ունեցող, և 1 գլուխ լծկան ունեցող, բայց հերկելու գործիքներից զուրկ տնտեսություններ.

III. մի գլուխ լծկան և հերկելու կամ կատարելագործված գործիքներ ունեցող տնտեսություններ. 2 գլուխ լծկան ունեցող, բայց առանց կատարելագործված գործիքների տնտեսություններ.

IV. չերկու գլուխ լծկան և կատարելագործված գործիքներ ունեցող տնտեսություններ. 3 գլուխ լծկան ունեցող, բայց առանց կատարելագործված գործիքների տնտեսություններ.

V. չերեք գլուխ լծկան և կատարելագործված գործիքներ ունեցող տնտեսություններ:

Տնտեսությունների այս դասավորումն ել, ինարեկե, շատ հեռու չե այն բանից, վոր հնարավորություն տա սահմանելու գուողի սոցիալական խմբերի քանակային կշիռը: Բայց այս խմբավորումը բնական գուշափային նշանների համաձայն կազմված ուրիշ խմբավորումներից մեզ ավելի լե մոտեցնում այդ փոխհարաբերությունը վորոշելուն:

Երբեք հիմք ընդունելով ըստ իրանց ունեցած լըծկանի և ինվենտարի զուգակցության տնտեսությունների խմբավորումը և ընդունելով, վոր արտադրության միջոցների չերրորդ տարրը—հողն ունեն հողարաժանության հետևանքով, այսպիսով մենք կարող ենք բոլոր տնտեսությունները բաժանել 3 հիմնական խմբերի. 1) տնտեսություններ, վորոնց անասնազրկությունը և ինվենտարազրկությունն անհրաժեշտություն ե առաջ բերում կամ իրանց հողարաժինը մշակելու ուրիշ լծկանով և ինվենտարով, կամ վաճառելու իրանց

բանվորական ուժը. 2) տնտեսություններ, վորոնք այնքան լծկան և ինվենտար ունեն, վոր հազիվ և բավականացնում (մանր) կամ բավականացնում և (միջակ) իրանց գուղատնտեսությունը բարելավելու. այս տնտեսությունների արտադրության միջոցներն այնքան մեծ չեն, վոր պահանջեն բանվոր վարձել և կամ հնարավորություն և ան արտադրության միջոցներն ուրիշ տնտեսությունների սխալմատիկաբար վարձուտալու. 3) տնտեսություններ, վորոնց ունեցած արտադրության միջոցները (լծկան և ինվենտար) առավել բարձր տիպի լեն (կատարելագործված ինվենտար) և մեծ քանակությամբ են (չերեք գլուխ լծկան և ավելի):

Մեր արամագրության տակ են չեղել կենարունական-սկանողային շրջանի 4 գավառակների վերաբերյալ մշակված տվյալներ: Անկասկած և, վոր նույնութիւնամանափակ լինելը հիմք չի տալիս բնորոշելու ԽՍՀՄ բոլոր շրջանների և հանրապետությունների շերտավորման պրոցեսները: Բայց կարելի լե լենթաղրել, վոր կենարունական-սկանողային շրջանում տեղի ունեցող պրոցեսներն ավելի կամ պակաս ուժգնությամբ տեղի լեն ունեցել նաև Խորհրդավային Միության այլ վայրելուում:

Կանգ առնենք ամենից առաջ տնտեսությունների թվի փոխհարաբերության շարժման վրա: Տնտեսությունների զատ-զատ խմբերի տեսակարար կշռի շարժման ինքընստինքսան չի կարող, ինարկե, բնորոշել սոցիալական հարաբերությունները գուղում: Կապիտալիստ ձեռնարկուների թվի նվազեցումը կարող է արտադրության միջոցներն իրանց ձեռքում կենարունացնելուն զուգահեռաբար գնալ, և այդպիսով՝ նրանց տեսակարար կշռի իջման հետ միասին՝ անտեսու-

թյունների ընդհանուր թվի մեջ կսացվի կապիտալիսական տարբերի տեսակաբար կշռի ըարձրացում՝ տնտեսությունների արտադրության միջոցների և արտադրանքի բաշխման մեջ։ Բայց այն պայմաններում, յերբ մեր գյուղի վերնախավի մեծամասնությունը դեռ հեռու լի արտադրության միջոցների աշքի ընկնող կենուրնացումից, յերբ ինքը «գյուղացիական խոշոր տնտեսության» հասկացողությունը մեր գյուղի համար շատ ե փոփոխվում տարբեր շրջաններում և այդպիսով ցուց է տալիս և խոշոր տնտեսությունների վոչ-բարձր մակարդակը, տնտեսությունների թվում խմբերի տեսակաբար կշռի շարժման այդպիսի համագրությունը կարող է վորոշ սահմաններում տնտեսությունների զարգացման ուղղության ցուցանիշ լինել։

Տնտեսությունների ամբողջ թվի բաժինումն ըստ խըմբերի:

| Տնտեսությունների խմբեր | Կուրսկի նահանգի Վ.-Դերեննակի գավառակ | | | Տամբովի նահանգի Նիկոլո-Կարանյան- սկի գավ. | | |
|---------------------------|--|-----------------|-----------------|---|-----------------|-----------------|
| | 1917 | 1924 | 1926 | 1917 | 1924 | 1926 |
| I | 19 ₅ | 19 ₇ | 21 ₉ | 26 ₁ | 32 ₇ | 23 ₁ |
| II | 5 ₆ | 1 ₂ | 11 ₃ | 24 ₃ | 16 ₅ | 11 ₄ |
| III | 57 ₆ | 64 ₇ | 64 ₄ | 22 ₄ | 45 ₅ | 49 ₅ |
| IV | 11 ₄ | 1 ₈ | 2 ₁ | 19 ₇ | 4 ₉ | 5 ₄ |
| V | 5 ₇ | 0 ₁ | 0 ₃ | 7 ₅ | 0 ₄ | 0 ₆ |

| Տնտեսությունների խմբեր | Տամբովի նահանգի Վիչայևսկի գավառակ | | | Տուլայի նահանգի Դարիշչենսկի գավառակ | | |
|---------------------------|--------------------------------------|-----------------|-----------------|--|-----------------|-----------------|
| | 1917 | 924 | 1926 | 1917 | 924 | 1926 |
| I | 35 ₈ | 49 ₁ | 49 ₃ | 2 ² ₀ | 17 ₄ | 2 ₁ |
| II | 30 ₀ | 15 ₉ | 14 ₃ | 25 ₀ | 13 ₀ | 13 ₀ |
| III | 19 ₈ | 34 ₃ | 36 ₄ | 24 ₀ | 61 ₉ | 59 ₅ |
| IV | 9 ₈ | 0 ₇ | — | 16 ₂ | 7 ₉ | 5 ₆ |
| V | 4 ₆ | — | — | 12 ₈ | 0 ₈ | 0 ₈ |

Մեր ագրարավիճակը (հողավիճակը) հեղափոխության հետևանքները, հեղափոխության, վորով կրում եր վոչ միայն հակածորոտատիրական, այլև հակակապիտալիստական բնույթ, վորոն ուղղված եր վոչ միայն կալվածատիրոջ գեմ, այլև գյուղի կապիտալիստական, կուլակային խմբերի գեմ, այդ հեղափոխության հետևանքներն արտացոլում են գյուղի բարձրագույն խմբերի թվաքանակի խիստ կրծատման մեջ։ Յեթե գյուղի վերնախավում գամենք նաև IV և V խմբերը, կտեսնենք, վոր առ 1926 թվականը մենք 1917 թվականի հետ համեմատած այդ խմբերի կրծատում ենք ունեցել—Վ.-Դերեննակի գավառակում 7 անգամ, Նիկոլո-Կարանյանսկի գավառակում 4,5 անգամ, Դարիշչենսկի գավառակում 4,4 անգամ, Պիչայևսկի գավառակում գուրս յեկավ, վոր 1926 թվին միայն յերկու տնտեսություն կար զնայած մի շարք բերբեր տարբիներին՝ խոշոր գյուղացիական տնտեսությունների քանակը շատ հեռու լի

մինչպատերազման փոխարարելությունից Դա ցուց է տալիս, վոր իր ուժի մեջ և մնում կենինի ասածը, թե «միջակը դարձել և հողագործության կենտրոնական դեմքը»:

Մենք արդեն առաջ նշեցինք, վոր տնտեսությունների թվական փոխարարելությունը զբուղի վերին խմբերի նշանակությունը վորոշելու բավարար չափանիշ է: Ուստի տնտեսությունների առանձին-առանձին խմբերի արտադրության միջոցների շարժման քննությանը զիմենք: Արտադրության միջոցների ինչ զանգված են կենտրոնացնում իրանց ձեռքում գլուղի տարբեր խմբերը: Մկանիք ցանքսի բաշխման քննությունից:

Մեկ Տնտեսությանը բանի դեսիաթեն ցանք և ընկերում.

| Թվականներ Խմբերը | Կուրսկի նահանգի | | | Տամբովի նահանգի | | | | |
|---------------------|------------------------|-----------------------------------|----------------|-----------------|-----------------|-----------------|------|------|
| | Վ.-Դերենսկի գավառակ | Վ. Նիկոլո-Կարանյա- սկի գավառակ | 1917 | 1924 | 1926 | 1917 | 1924 | 1.26 |
| I | 1 ₅ | 2 ₄ | 2 ₁ | 1 ₆ | 3 ₁ | 2 ₈ | | |
| II | 2 ₉ | 3 ₇ | 3 ₃ | 4 ₈ | 4 ₅ | 4 ₆ | | |
| III | 4 ₇ | 4 ₇ | 4 ₇ | 6 ₇ | 5 ₄ | 6 ₅ | | |
| IV | 8 ₃ | 6 ₁ | 6 ₃ | 10 ₁ | 7 ₆ | 11 ₃ | | |
| V | 13 ₆ | 4 ₅ | 7 ₇ | 16 ₉ | 11 ₄ | 16 ₅ | | |

| Թվականներ Խմբերը | Տամբովի նահանգի | | | Տուլայի նահանգի | | | | |
|---------------------|----------------------|------------------------|-----------------|-----------------|-----------------|-----------------|------|------|
| | Պեչայեսկի գավառակ | Դարչաչենսկի գավառակ | 1917 | 1924 | 1926 | 1917 | 1924 | 1926 |
| I | 1 ₇ | 2 ₂ | 2 ₃ | 1 ₉ | 2 ₇ | 3 ₂ | | |
| II | 4 ₀ | 3 ₄ | 3 ₇ | 4 ₀ | 3 ₆ | 4 ₅ | | |
| III | 6 ₆ | 4 ₁ | 4 ₅ | 5 ₈ | 5 ₂ | 6 ₅ | | |
| IV | 9 ₇ | 6 ₀ | 10 ₆ | 9 ₃ | 7 ₈ | 10 ₄ | | |
| V | 15 ₀ | — | 10 ₄ | 17 ₁ | 13 ₀ | 13 ₀ | | |

Մինչ լուրս գավառակներում 1917 թ. մինչև 1926 թ. ստորին խմբերի ցանքսի չափերը մեծանում են, վերին խմբերի ցանքսի կրճատումն և տեղի ունենում: Դյուղի ստորին խմբերին հող տալու հետևանքով նրա տնտեսությունը մեծացել է և դրա հետևանքով ցանքսի նշանակությունը բարձրացել է սոկ բարձրացել խմբերում հողի վերաբանման հետևանքով՝ գոյություն ունեցող խոշոր տնտեսությունների ցանքսի չափերը կրճատվել են: Ազադիով, քննելով տնտեսություններն իրանց ցանքսերի տարածության կողմից՝ մենք տեսնում ենք վոչ միայն խոշոր տնտեսությունների թվի և հողաբաժնի կրճատումն: այլև իզաքած տընտեսությունների մեծության փոքրացումն: Դա ազգել է նաև «ցանքսավին մկրատի բացգածքի»՝ բարձրագույն և ստորին խմբերի տնտեսությունների փոխարարելության վրա: 1917 և 1926 թվականների այդ փոխարարելությունը համեմատության դնելով՝ հետվոյալ ազուասկը կատանանք:

Գորբան անգամ և ավելի բարձրագույն խմբի Տընտեսությունների ցանքս ստորին խմբերի Տնտեսությունների ցանքսից.

| ԹՎԱԿԱՆՆԵՐ | Կուրսկի նահանգի գումարի Վ.-Դերենսկի գավառակ | | Տամբովի նահանգի հանգի Նիկոլո-Կարանյասկի գավառակ | | Տուլայի նահանգի հանգի Պիչակի գավառակ | |
|-----------|---|------|---|----------------|--------------------------------------|----------------|
| | 1917 | 1926 | 9 ₁ | 6 ₉ | 10 ₆ | 4 ₅ |
| | | | 9 ₀ | 4 ₁ | 8 ₈ | 5 ₉ |
| | | | 3 ₇ | 6 ₉ | 6 ₈ | 4 ₅ |

Բոլոր գավառակներում և նահանգներում տնտեսությունների բարձրագույն և ստորին խմբերի ցանքսի չափերի մեջ փոխարարելությունը կրճատվել և իր-

կու և ավելի անգամ։ Գյուղի բարձրագույն խմբի տնտեսությունների ցանքսի չափերը 1926 թվին կը բառվել են վոչ միայն բացարձակապես, այլև համեմատական չափով։

Խոշոր տնտեսությունների թվի կրճատումը, նրանց ցանքսի չափերի կրճատումն այն ժամանակ, յերբ աճել ե մանր տնտեսությունների ցանքը, այն հետեանքն և ունեցել վոր ամբողջ ցանքսալին տարածությունը խիստ նկատելիորեն վերաբաժանվել և տնտեսությունների առանձին-առանձին խմբերի մեջ։

Ամբողջ ցանքսալին տարածության վերաբաժնումը խմբերի մեջ $0/0$ -ով.

| Թվականներ խմբեր | Կուլսկի նահանգի գ.՝ Դերենսկի գավառակ | | | Տամբովի նահան- գի Նիկոլո-Կաբա- նյակի գավառակ | | |
|--------------------|--|------------------|------------------|--|------------------|------------------|
| | 1917 | 1924 | 1926 | 1917 | 1924 | 1926 |
| I | 6 ₀ | 11 ₂ | 11 ₈ | 6 ₆ | 21 ₈ | 17 ₁ |
| II | 3 ₄ | 1 ₀ | 9 ₄ | 18 ₃ | 16 ₀ | 9 ₈ |
| III | 55 ₄ | 75 ₉ | 75 ₁ | 23 ₇ | 52 ₂ | 60 ₀ |
| IV | 18 ₄ | 1 ₈ | 3 ₂ | 31 ₃ | 8 ₀ | 11 ₄ |
| V | 15 ₈ | 0 ₁ | 0 ₅ | 20 ₁ | 1 ₀ | 1 ₇ |
| Հնդամենը | 100 ₀ | .00 ₀ | 100 ₀ | 100 ₀ | 100 ₀ | 100 ₀ |

| Թվականներ խմբեր | Տամբովի նահանգի գլշայնսկի գավա- ռակ | | | Տուլայի նահանգի Դարենսկի գա- վառակ | | |
|--------------------|---|------------------|------------------|--|------------------|------------------|
| | 1917 | 1924 | 1926 | 1917 | 1924 | 1926 |
| I | 12 ₉ | 35 ₀ | 34 ₄ | 6 ₅ | 9 ₉ | 11 ₆ |
| II | 25 ₄ | 17 ₅ | 15 ₉ | 15 ₄ | 9 ₀ | 10 ₀ |
| III | 27 ₂ | 46 ₂ | 49 ₁ | 21 ₂ | 66 ₁ | 66 ₇ |
| IV | 20 ₀ | 1 ₃ | 0 ₃ | 22 ₉ | 12 ₈ | 10 ₀ |
| V | 14 ₅ | — | 0 ₃ | 34 ₀ | 2 ₂ | 1 ₇ |
| Հնդամենը | 100 ₀ | 100 ₀ | 100 ₀ | 100 ₀ | 100 ₀ | 100 ₀ |

Մենք մոտեցանք արտադրության բոլոր միջոցները տնտեսությունների առանձին-առանձին խմբերի մեջ բաշխելու հարցին։ Յանքսալին տարածության բաշխումը ցուց է տալիս, վոր գյուղի վերին խմբերի ցանքսի տարածությունը միքանի անգամ պակասել է։ Այսպես, բարձր 2 խմբերին ընկնում եր վերին Դերենսկի գավառակում 1917 թ. ամբողջ ցանքսալին տարածության $35,20/0$ -ը, 1926 թ.՝ $3,70/0$, Նիկոլո-Կաբանյակսկի գավառակում նույն թվականներին — $51,40/0$ և $13,10/0$, Պիչայնսկի գավառակում — $34,50/0$ և $0,60/0$, Դարենսկի գավառակում — $56,90/0$ և $11,70/0$, ինչպես տեսնում ենք, բարձրագույն խմբերի ցանքսի տարածության անկումը շատ աչքի ընկնող է։ Միենուն յամանակ տնտեսությունների միջակ խմբի տնտեսության այդ բաժինը խիստ բարձրանում է. Վ.՝ Դերենս-

սկի գավառակում 1917 թվականի 55,4% ից բարձրանում և 75,1% ից, նույն տարիներում Նիկոլո-Կաբանյեսկի գավառակում՝ 23,7% ից 60% ից, Պիչայևսկի գավառակում՝ 27,2% ից 49,1% ից, Դարիշենսկի գավառակում՝ 21,2% ից 66,7% ից:

Ինչպես տեսնում ենք, տնտեսությունների բարձրագույն խմբերը հեռու լին ցանքսալին տարածությունն իրանց ձեռքում 1917 թվականի չափով կենտրոնացնելուց ընդհակառակն մանր և միջին տընտեսությունների ուժն ու նշանակությունն աճել են, և նրանց բաժին ե գալիս համապատասխան գավառակների ցանքսալին տարածության $\frac{1}{2}$ -ից $\frac{3}{4}$ -ը:

Տնտեսությունների զատ-զատ խմբերի մեջ լծկան ձիերի բաշխումից նույնպես յիրեռում ե բարձրագույն խմբերի տեսակարար կշռի նվազումը.

Լծկան ձիերի ամբողջ բանակի բաշխումը խմբերի

| Թվականները Տնտեսությունները | Կուրոկի նահանգի | | | Տամբովի նահանգի | | |
|--------------------------------|------------------------|-------------------------|------------------------|------------------------|-------------------------|------------------------|
| | Վ.-Դիերենսկի գավառ | Նիկոլո-Կաբանյեսկի գավառ | Դիերենսկի գավառ | Վ.-Դիերենսկի գավառ | Նիկոլո-Կաբանյեսկի գավառ | Դիերենսկի գավառ |
| | 1917 | 1924 | 1926 | 1917 | 1924 | 1926 |
| I. | — | — | — | — | — | — |
| II. | 6 | 6 ₄ | 3 ₃ | 19 ₇ | 8 ₆ | 6 ₄ |
| III. | 62 ₁ | 89 ₅ | 89 ₆ | 26 ₃ | 73 ₈ | 74 ₇ |
| IV. | 20 ₈ | 3 ₅ | 5 ₆ | 33 ₂ | 15 ₆ | 16 ₃ |
| V. | 15 ₅ | 0 ₆ | 1 ₅ | 20 ₈ | 2 ₀ | 2 ₆ |
| Ընդամենը | 100₀ | 100₀ | 100₀ | 100₀ | 100₀ | 100₀ |

| Թվականները Տնտեսությունները | Տամբովի նահանգի | | | Տուլայի նահանգի | | |
|--------------------------------|------------------------|------------------------|------------------------|------------------------|------------------------|------------------------|
| | Վ.-Դիերենսկի գավառ | Պիչայևսկի գավառ | Դարիշենսկի գավառ | Վ.-Դիերենսկի գավառ | Պիչայևսկի գավառ | Դարիշենսկի գավառ |
| | 1917 | 1924 | 1926 | 1917 | 1924 | 1926 |
| I. | — | — | — | — | — | — |
| II. | 30 ₉ | 10 ₈ | 4 ₈ | 17 ₂ | 8 ₁ | 5 ₁ |
| III. | 30 ₉ | 85 ₃ | 94 ₀ | 25 ₆ | 72 ₁ | 77 ₃ |
| IV. | 22 ₀ | 3 ₉ | 0 ₅ | 24 ₀ | 17 ₁ | 14 ₂ |
| V. | 16 ₂ | — | 0 ₇ | 33 ₂ | 2 ₇ | 3 ₄ |
| Ընդամենը | 100₀ | 100₀ | 100₀ | 100₀ | 100₀ | 100₀ |

Յերկրագործության մեջ արտադրության մյուս հիմնական միջոցի՝ լծկան ձիու պատկերը նույն է, ինչ վոր ցանքսալինը՝ Բարձրագույն խմբերի մասի խիստ կրծատումն է, տնտեսությունների միջակ խմբի ձիերի աչքի ընկնող աճումն. 1921 թվականի սովոր միաձի տնտեսությունների աչքի ընկնող խմբերի զարձրեց հերկելու գործիքները ունեցող բարյ ձիազուրկ։ Հետագա տարիներում տնտեսությունների վերականգնումն ամրացրեց միջին խմբերը։ Այդ խմբերն բաժին ե ընկնում լծկան ձիերի ամրող թվի $\frac{3}{4}$ -ը և ավելի։ Միենալու ժամանակ բարձրագույն խմբերի լծկան ձիերի բաժինը խիստ փոքրացավ, Վ.-Դիերենսկի գավառակում 1917 թվի $36,3\%$ -ի փոխարեն այդ խմբերը 1926 թվին ունեիլն միայն $7,1\%$, Նիկոլո-Կաբանյեսկի գավառակում՝ $54,0\%$ -ի տեղ $15,9\%$, Պիչայևսկի գավառակում՝ $38,2\%$ -ի տեղ $1,2\%$ և Դարիշենսկի գավառակում՝ $57,2\%$ -ի տեղ $17,6\%$, Մենք կարող ենք լիդ-

րակացնել, վոր մեր վերցրած գավառակներում լծկան անսառնը կենտրոնանում է գլխավորապես միջակ տընտեսություններում, վոր խոշոր տնտեսությունների լծկան անսառնների քանակը խիստ կրճատվել է 1917 թվականի համեմատությամբ և այնպիսի մեծություն չի ներկայացնում, վոր հիմք գառնա ոսպողիցիալի այն յեզրակացությանը, թե «կապիտալիզմը գյուղում մեծ արագությամբ աճում է»:

Այլ բան և ներկայացնում կատարելագործված և բարդ ինվենտարի փոխարարելությունը: Յեթե կատարելագործված ինվենտարը ունենալը կամ չունենալը այս կամ այն խմբավորման հիմք և ծառալում, ապա ուրիշն ընսական և սպասել վոր ինվենտարը կենտրոնացած լինի բարձրագույն խմբերի ձևորում:

Կալիչների թիվը յեզ երանց բաշխումը 1926 թ.

| Համարական թիվը՝ մեջ մտնելու ամենամեծ ամսականը | Կուրսկի նահանգի հանդի Վ.՝ Դերենսկի գավառակ | | Տամբովի նահանգի Նիկոլո-կաբանյա- սկի և Պիչայսկի գավառակ | | Տուլյայի նահանգի Դարիչնեսկի գա- վառակ | |
|---|---|---|---|---|---|--|
| | Բյալի 100 տասներեց քայլելու համարականը | Բյալի կամ 100 տասներեց քայլելու համարականը | Խմբի 100 տասներեց քայլելու համարականը | Համբական- սություն 100 տասներեց քայլելու համարականը | Ամբողջ կամ 100 տասներեց քայլելու 0/0 0/0 | Խմբի 100 տասներեց քայլելու համարականը |
| I | — | — | — | — | — | — |
| II | — | — | — | — | 0 ₇ | 2 ₃ |
| III | 0 ₉ | 50 ₀ | 0 ₃ | 75 ₀ | 3 ₃ | 46 ₆ |
| IV | 20 ₀ | 37 ₅ | — | — | 29 ₃ | 39 ₅ |
| V | 50 ₀ | 12 ₅ | 12 ₅ | 15 ₀ | 62 ₅ | 11 ₆ |

Բայց հարկավոր ե այստեղ նկատել, վոր տնտեսությունների բարձրագույն (V) խումբը, վոր առավել խոչըն տնտեսություններն են ներկայացնում, կատարելագործված ինվենտարի բաշխման դեպքում ևս չի հանդիսանում վորպես այդ ինվենտարի հիմնական տիրապետող:

Վերցրած գավառակներում կատարելագործված գործիքների սակալության պատճառով վերցնենք միայն կալսիչների թիվը և նրանց բաշխումը տնտեսությունների մեջ 1926 թվին (տես եջ 64-ի աղյուսակը):

Առավել խոշոր տնտեսություններում կալսիչ ավելի հաճախ և հանդիպում: Բայց համապատասխան գավառակներում կալսիչների ընդհանուր թիվը կեսը կենտրոնացած և միջակ տնտեսություններում:

Մենք քննեցինք գյուղացիական տնտեսությունների միքանի տարրվա շարժումը և համոզիցինք այն բանում, վոր վոչ քիչ թե շատ խոշոր տնտեսությունների քանակը, վոչ արտադրության միջոցների դրանց ձեռքում կենտրոնացած լինելը հիմք չեն տալիս յեզրակացնելու, թե «կապիտալիզմը գյուղում մեծ արագությամբ աճում է»: Գավառակների վերաբերյալ այս տվյալներն ամբողջովին հաստատում են այն դրությունը, վոր

«... հեղափոխությունից հետո շատ և փոխվել միջակի դիրքն ու գերը: Միջակը դարձել է յերկրագործության «կենտրոնական դեմք»: Այդ խամաց այժմ վոչ միայն չի «քշվում», այլև ուժեղանում է: Սակայն գլխավորապես սակավազորի (առաջները գյուղում գերակռող չքավորության) հաշվին քանակով մեծացած միջակի տնտեսա-

կան մակարդակը փոխվել ե, և յեթե վերցնեք մեր տիպիկ միջակին, կտեսնեք վոր այդ մակարդակն առաջմ միքիչ ստոր ե կանգնած» (ընկ. Մոլոտվի յեղափակման խոսքը):

Ընկ. Աւելինի հաշիվերում մինչխորհրդավին գյուղի միաձի տնտեսությունը համարյա միշտ ընդունվում ե վորպես չքափորական տնտեսություն: Խորհրդավին գյուղն, ինչպես հայտնի լե, ամենից շատ միաձի տընտեսություն ունի: Այսպես, ՌԽՖՍՀ մեջ 1926 թվականին միաձիները 50,2% ելին: Միաձիների այդ գերակությունը խորհրդավին գյուղում ընդդում ե տընտեսությունների մանրանալը, վոր տեղի լե ունեցել հեղափոխության պրոցեսի մեջ: Դա հարց է առաջացնում նաև այն մասին, թե խորհրդավին գյուղի միաձի տնտեսությունը վորքան նույնանիշ ե կիսաճորտատիպական մինչհեղափոխական գյուղի միաձիին:

Յեթե միաձի տնտեսությանը մոտենանք նրա արտադրության միջոցների չափերի տեսակետից, կարելի կինի տեսնել, վոր այդպիսի տնտեսությունների մեծամասնության ցանքսերի չափը միքիչ մեծացել ե: Այսպես՝ մի շարք նահանգներում, ուր կարելի լե միաձիների տնտեսությունները համեմատել, նրանց տնտեսության հետեւյալ չափերը կան (տ. էջ 67-ի աղյուսակ):

Հարկավոր է միայն խորը մոտենալ բերած տվյալներին, վորպեսզի յերկան բերենք նրանց ինտեր թագընվոր վոչ միայն քանակական փոփոխություններ, այլի վորակական խիստ ենական փոփոխություններ, հասարակական հարաբերությունների փոփոխություններ, վորոնք կապված են միաձի տնտեսությունների արտադրության չափով:

Մի ձի ունեցողներ:

| Ն Ա Զ Ա Ն Գ | ՊԵՆԳԵՆԱԿԻ ՆԱՀԱՆԱԳ (4 գավառակ) |
|-----------------|--|
| Թ Վ Ա Կ Ա Ն Ե Ր | |
| 1910 | 35 ₈ 6 ₂ 49 ₅ 17 ₅ 68 ₀ |
| 1920 | 67 ₆ 7 ₆ — — — |

| Ն Ա Զ Ա Ն Գ | ՏՈՒՂԱՋԻ ՆԱՀԱՆԱԳ (ԴԱՐԻՀՀԵԿԱԿԻ Գ.) |
|-----------------|--|
| Թ Վ Ա Կ Ա Ն Ե Ր | |
| 1910 | 36 ₈ 7 ₁ 45 ₆ 15 ₂ 47 ₀ |
| 1920 | 64 ₃ 8 ₂ — — — |

Հիրավի, քննենք, տեսնենք, թե ինչից ե կազմվել միաձիի ցանքավին տարածությունը: Մինչհեղափոխական ժամանակները գյուղի այդ խմբերից նշանագոր չափով ճորտական վարձակալության փաստն ամենդրության չափերի հետ:

քին հայտնի է: Խիստ սահմանափակ հողաբաժնի տեր լինելով՝ միաձիները հանդիսանում ելին վորպես կաշ վածարական դաշտերի վարձակալների հիմնական խմբեր, ցանելով կիսովի կամ վարձած հողի փոխարեն կալվածատիրոջ համար աշխատելով: Վերջիվերջո քիչ ցանքս անելով՝ միաձիերը գլխավորապես դառնում ելին վարձված հողի փոխարեն կալվածատիրոջ համար կիսամարտավայրին իրանց աշխատողներ՝ իրանց անտեսական գործունեյությամբ կախումն ունենալով կալվածատիրոջ տնտեսությունից: Հոկտեմբերյան հեղափոխությունն այդ տնտեսություններն ազատեց ճորտատիրական ցանցերից: Այդ տնտեսությունների ցանքսի չափելոն աճեցին, բայց—ինչ վոր ամենից գլխավորն ե—ինքը ցանքսն այժմ կախված չե կալվածատիրոջից, վարձակալության համար մեծ վարձ վճարել չի պահանջում, ճորտատիրական հարստահարության համար հող չեստեղծում: Վերջնականում խորհրդավորն գյուղի ընդհանուր պայմանները միաձի տնտեսության համար տնտեսություն անելու շատ ավելի լավ պայմաններ են ստեղծում: Միաձի տնտեսությունը կիսամարտատիրական կալվածատիրական շահագործման հիմնական մաս լինելով, Հոկտեմբերյան հեղափոխության հետեւ վանքով՝ իր տնտեսությունը շարունակելով հենց նույն կամ ավելի մեծ տարածության վրա՝ բարձրացրեց իր կանքի մակարդակը, մոտեցավ մանր միջակային տընտեսությանը, վորն ընդունակ ե բավարարելու իր ընտանիքի անդամների պահանջը տանելի կերպով: Ահա թե ինչու միաձի տնտեսությունները, վոր մեծավ մասամբ հանդիսանում ելին վորպես կալվածատիրական շահագործման ասպարեզ, «քայլաված մանր գյուղացի-

ություն», խորհրդավոր գյուղում դարձան և դառնում են միջակային, թեև մանր տնտեսություններ, վորոնք կարող են իրանց աշխատանքի արդյունքը հատկացնել թե իրանց պահանջներին ավելի մեծ չափով բավարարելուն և թե արտադրության միջոցներ ձեռք բերելուն, այսինքն իրանց տնտեսության մակարդակը բարձրացնելուն:

XV Համագումարի վորոշումը նշում ե, վոր խորհրդավորն գյուղում «միջակների խմբի ուժեղացման պրոցես» և տեղի ունենում: Սրա ճշմարտությունն են՝ ապացուցում արդեն վերը բերած թվերը, վորոնք բնորոշում են տնտեսությունների միջակ խմբին բաժին

III Խմբի տնտեսությունները.

| Թղթական նույնական պահանջման մաս մասնակի մակարդակը | Կուրուկի նահանգի գ.՝ Դեւեննսկի գա.՝ գառակ | | Տամբովի նահանգի Նիկոլո-Կաբանյակի գավառակ | |
|---|---|-----------------------|--|-----------------------|
| | Վարչության մասնակի մակարդակը | Վոր 0/0-ն ե իրենցը | Վարչության մակարդակը | Վոր 0/0-ն ե իրենցը |
| 1917 | 57 ₆ | 15 ₄ | 62 ₁ | 22 ₄ |
| 1924 | 66 ₇ | 75 ₉ | 89 ₅ | 45 ₅ |
| 1926 | 64 ₄ | 75 ₁ | 89 ₆ | 49 ₅ |
| | | | | 60 ₀ |
| | | | | 74 ₇ |

Թվականներ

| | Տամբովի նահանգի Պեչայևսկի գավառակ | | | Տուլայի նահանգի Դարիչչենսկի գավառակ | | | | |
|------|--------------------------------------|-----------------|-----------------------|--|-----------------------|-----------------|-----------------------|-----------------|
| | Աճքող անտեսություններ | | Գոր 0/0-ն ե թըենցը | | Աճքող անտեսություններ | | Գոր 0/0-ն ե թըենցը | |
| | Ըլի լուրջը | անտեսություններ | Ըլի լուրջը | անտեսություններ | Ըլի լուրջը | անտեսություններ | Ըլի լուրջը | անտեսություններ |
| 1917 | 19 ₈ | 27 ₂ | 30 ₉ | 24 ₀ | 21 ₂ | 25 ₆ | | |
| 1924 | 34 ₃ | 46 ₂ | 85 ₃ | 61 ₉ | 66 ₁ | 72 ₁ | | |
| 1927 | 36 ₄ | 49 ₁ | 94 ₀ | 59 ₅ | 66 ₇ | 77 ₃ | | |

ընկնող արտադրության միջոցների չափը: Ընդ ամեն-
այդ տվյալները ցուց են տալիս վոչ միայն միջակ-
տնտեսությունների խմբի բարձրացած նշանակություն-
նը. Նրանք ապացուցում են նաև, վոր հենց միջակա-
լին տնտեսություններն ամրապնդվել են:

Ուշադրություն դարձնենք ամենից առաջ, թե ի-
րանց ամբողջ քանակի մեջ տնտեսությունների վնա-
մասն ինչ ե լեզել և ինչ ե (շարժումը) և տնտեսու-
թյունների միջակ խմբին պատկանող արտադրության-
միջոցներն ամբողջի վեր մասն են կազմում (տես-
նախընթաց եցի և վերել աղջուսակը):

Հարկավոր ե միքիչ ավելի մանրամասն կանգ-
առնել այս աղջուսակի վրա: Դա գյուղի միջակալին

մասսաների ուժեղացման թե թուլացման պատասխանն
ե տալիս: Ամենից առաջ իր վրա ուշադրություն ե
դարձնել տալիս այն փաստը, վոր մինչ յերկու գավա-
ռակում միջակ տնտեսությունների տեսակարար կշիռը
1924 թվականից մինչև 1926 թվականը միքիչ կրամա-
վել ե, մյուս կողմից դրանց ցանքալիին տարածության
բաժինը, վորպես նաև լծկան ձիերի բաժինն աճել ե,
և այդ աճումն անընդհատ շարունակվում ե հեղափո-
խության տարիներում: Նույն բանն ել ավելի մեծ չա-
փով և վերաբերում մյուս լերկու գավառակին, ուր
նկատվում ե նաև միջակ տնտեսությունների բաժնի
ավելացում ամբողջ տնտեսությունների թվի մեջ: Ընդ
ունի հարկավոր և նշել, վոր միջակ տնտեսություննե-
րի արտադրության միջոցների բաժնի աճման թափը
շատ ավելի մեծ և հենց տնտեսությունների իրանց աճ-
ման թափից:

Գյուղում սոցիալական կապերի և հարաբերու-
թյունների տարածվելը պետք է հնարավորություն տա-
դուրս բերելու հիմնական դասակարգավիճակներն ըստ
առանձին-առանձին տնտեսություններում լեզած սո-
ցիալապես-հակասող հարաբերությունների զարգացման
աստիճանի: Վիճակագրությամբ պարզված այդպիսի
հարաբերությունների թվում պետք ե հաշվել բանվո-
րական ուժի վարձել-վաճառելը, լծկանի և ինվենտարի
վարձել-վարձու տալը, հողի խոշոր վարձակալություն-
ը, առևտրա-արդյունաբերական հաստատության առ-
կայությունը: Մինչև 1927 թ. վերջին դինամիկական
համարագրությունը միակ նույթը, վոր կարելի լեր
գյուղագրությունը միակ նույթը, վորոշ չա-
փով գյուղացիական տնտեսությունների բարձեներն

Էլին: Հարկ ե նկատել, վոր մինչև վերջին ժամանակներս տնտեսությունների բյուջետային ցուցակագրությունը ևս մի շարք խիստ եյական պակասություններ ուներ, գլխավորապես միքանի հայտնաբերված հարաբերությունների ճիշտ տնտեսական բնորոշման ուղղությամբ: Բայց գյուղացիական տնտեսությունների ցուցակագրության վերաբերյալ գոյություն ունեցող նյութերից դա ամենից հիմնավորն ու վստահելին ե: Այդ նյութի խմբավորման մեթոդը հետևանք ե խմբավորման նպատակի—դուրս բերել տնտեսությունների սոցիալապես տարբերվող խմբերը: Ըստ իրանց սոցիալական պատկերի տնտեսությունները տարբերող հատկանիշները ազել ե նույն տնտեսությունների վերլուծումն ըստ իրանց չափի, վորն արտահայտված ե արտադրության միջոցների արժեքի մեջ: Այժմ առանձին-առանձին հատկանիշների ազգեցության քանակային սահմանավորման անհամարեցության հարցն ե բարձրանում, վորովհետև միայն այս կամ այն սոցիալական հարաբերության չափն ու ծավալն են կարող բնորոշել մանր գյուղացիական տնտեսությունը պրոլետարական կամ բուրժուական գառնալու աստիճանը:

Ինկատի ունենալով, վոր գյուղացիական տնտեսությունների մեծամասնության մեջ, նույնիսկ պրոլետարական կամ բուրժուական գառնալու ճանապարհի վրա գտնվող տնտեսությունների մեջ, այդ սոցիալական փոխհարաբերությունները հարմարվում են սեփական տնտեսության հետև քանակով այնքան ել մեծ չեն, տընտեսություններն առանձին-առանձին խմբերի բաժանելով՝ մենք կիրառել ենք քանակական նվազագույն սահմանաները:

Մարդին խմբին ենք վերաբերել այն տնտեսությունները, վորոնց բանվորական ուժը վաճառում են 50 որից ավելի: Այդ խումբը (I) պրոլետարական կոչելնայնքան ել ճիշտ չե, բայց անվիճելի չե, վորդա բատրակային տնտեսություններին ամենամոտ խումբն ե:

Զքավորական կիսապրոլետարական տնտեսությունների խմբում (II) են դասված այն տնտեսությունները, վորոնք կամ վաճառում են իրանց բանվորական ուժը 20-ից մինչև 50 որ, կամ լծկան են վարձում 20 որից ավելի ժամանակով կամ ինվենտար են վարձում 10 որից ավելի ժամանակով: Միջակ գյուղատնտեսությունները, այսինքն ինքնուրույն արտադրիչների տնտեսությունները չերկու խմբի յենք վերածել—1) տնտեսություններ, վորոնց սոցիալական-արտադրական կապերը նվազագույն չափով են զարգացած (բանվորական ուժի վաճառում կամ բանվոր վարձել մինչև 20 որ ժամանակով, լծկան վարձել կամ վարձու տալ մինչև 20 որ, ինվենտար վարձել և վարձու տալ մինչև 10 որ) (III), և 2) տնտեսություններ, վորոնցում շահագործման հարաբերությունները գերակշռությունը են կախվածության հարաբերություններից, բայց բանվորական ուժ վարձելում 50 որից չեն անցնում: Այստեղ են հաշված նաև այն տնտեսությունները, վորոնք լծկան են վարձու տալիս 20 որից ավելի ժամանակով և ինվենտար՝ 10 որից ավելի ժամանակով (IV խումբ): Աչքի ընկնող չափով զարգացած շահագործական տեսակներ (միտումներ) չունենալով՝ տնտեսությունների այս խումբը սոցիալապես չի անջատվում ինքնուրույն (միջակային) տնտեսությունների հիմնական խավից: Ըստամբին իր միջոցներն ու-

բիշ տնտեսությունների բաց թողնելով և 20-ից մինչեւ 50 որով բանվորական ուժ վարձելով, միջակալին տընտեսությունների շրջանում այդ տնտեսություններն աչքի լին ընկնում, թեև վոչ մեծամասնորեն և փոքր չափերով, ձեռնարկողական տարրեր ունենալով:

50 որից ավելի ժամանակով բանվորական ուժ վարձող տնտեսությունները դասվել են բարձրագույն խմբում: Այդ սահմաններում տեղի ունեցող վարձակալությունը գենես այդ տնտեսությունները կապիտալիստական չի դարձնում, բայց այդ տնտեսությունները գյուղացիական տնտեսությունների ընդհանուր մասսայից տարբերվում են բանվոր վարձերու չափերով, ուստի և տնտեսությունների առանձին խումբ են համարված:

Այսպիսով ինկատի ունենալով այն քանակական սահմանների ամբողջ պայմանականությունը, վրոնք տնտեսությունները սոցիալապես-համասեռ խմբերի լին վերածում, մենք հսկավորություն ենք ստացել իրարից զատիլու գյուղի կապիտալիստական վերնախավին առավել մոտեցող՝ տնտեսությունները (Վ խումբ) և գյուղի ստորին լմբերը:

Բայց կուրակալին տնտեսություններն ինչ ուժ ունեն այս տվյալների համաձայն: Ամենից առաջ նկատենք, զոր տնտեսությունների ամբողջ թվից տնտեսությունների բարձրագույն խմբին ընկնում եր Ռէրայնարի անտառավայրում և դաշտավայրում տնտեսությունների $5,2^0/_{\circ}$ -ը, Հյուսիսային Կովկասում— $5,3^0/_{\circ}$ -ը, Անդրուրալում և Մերձաւրալում— $9,3^0/_{\circ}$ ը:

Այդ տնտեսություններին ընկնում եր—Ռէրայնարում գյուղատնտեսական մեքենաների և գործիքնե-

րի արժողության $18,7^0/_{\circ}$ -ը, լծկանների $8,7^0/_{\circ}$ -ը, ցանքսերի $8,4^0/_{\circ}$ -ը, գյուղատնտեսական արտադրության վաճառված մասի $10,1^0/_{\circ}$ -ը, գնվածի $6,8^0/_{\circ}$ և ամբողջ գյուղատնտեսական արտադրության պաշարի արժողության $12,8^0/_{\circ}$ -ը. Հյուսիսային Կովկասում՝ գյուղատնտեսական մեքենաների և գործիքների արժողության $17,5^0/_{\circ}$ -ը, լծկանների $14,6^0/_{\circ}$ -ը, բոլոր ցանքսերի $11,7^0/_{\circ}$ -ը, գյուղատնտեսական ամբողջ արտադրության վաճառված մասի $12,7^0/_{\circ}$ -ը, գնվածի $8,6^0/_{\circ}$ -ը և ամբողջ գյուղատնտեսական արտադրության պաշարի արժողության $12,8^0/_{\circ}$ -ը. Ուրալան շրջանում՝ գյուղատնտեսական մեքենաների և գործիքների արժողության $29,1^0/_{\circ}$ -ը, լծկանների $18,4^0/_{\circ}$ -ը, ամբողջ ցանքսի $19,8^0/_{\circ}$ -ը, գյուղատնտեսական ամբողջ արտադրության վաճառված մասի $24,0^0/_{\circ}$ -ը, գնվածի $17,8^0/_{\circ}$ -ը և ամբողջ գյուղատնտեսական արտադրության պաշարի արժողության $18,4^0/_{\circ}$ -ը:

Ինչպես տեսնում ենք, նույնիսկ ապրանքայնապես առավել զարգացած գյուղատնտեսական շրջաններում կուլակալին տնտեսությունների նշանակությունը շատ հեռու է այն տեսակաբար կշիռն ունենալուց, ինչ վոր վերագրում են ոպպողիցիոն տնտեսագետները: Այդ շրջաններում, ինչպես նաև ԽՍՀՄ մյուս շրջանների մեծամասնության մեջ, միջակ գյուղացին շարունակում է մնալ «յերկրագործության կենտրոնական դեմքը»:

VII.

Վորոնք են ուրեմն շերտավորման պրոցեսների այն առանձնատկությունները, վորոնք յերևան յեկան վորպես մեր գյուղի սոցիալական հարաբերությունների, այնպես ել նրա այս կամ այն դասակարգերի ուժերի մանրամասն քննությունից:

Առաջին բանը, վոր խորհրդավին գյուղը խիստ տարբերում է մինչխորհրդայինից, վորը կարգածատիրոջը և կապիտալին պրոլետարիատի հաղթելու հետեւ վանքն ե,—զա ցարական Ռուսաստանի ժառանգության—գյուղական չքավորության ահագին մասսաների նպատակադրված լիկվիդացիան եւ Գյուղի կապիտալիստական զարգացումն առաջ եր գնում՝ քայլաւելով հասարակ ապրանքարտադրիչների հիմնական մասսաներին—գյուղացիներին: Մանր գյուղացիական տնտեսությունների ալղ քայլաւումը նրանց վոչ միշտ եր հասցնում անմիջապես պրոլետարական շարքերն ընկենալուն: Շատ ավելի հաճախ զա արտահայտվում եր նրանով, վոր ընդհանուր կենսական մակարդակին իջնում եր, արտադրության հիմնական միջոցների մի նշանավոր մասից զրկվում ելին և զբա շնորհիվ չքավորական տնտեսություն ելին վարում: Ռուսաստանի գյուղատնտեսության մեջ յեղած շատ մեծ չափով ե յական կիսաճորտատիրական մնացորդների շնորհիվ կապիտալիստական հողագործության զարգացումը

գյուղացիության ահագին մասսաներ քայլաւելով՝ չքավորական դրության եր հասցնում:

«Բուրժուական հասարակությունը ծծում ե գյուղացու սրտից արյունը և նրա գլխից ուղեղը և ալղ բոլորը նետում կապիտալիզմի—ալղ նոր ալքիմիկոսի կաթսան» (Մ ա բ ք ս):

Չքավորական ահագին մասսաների առկայությունը գյուղի կապիտալիստական կերպարանափոխության ուղեկցող պրոցեսս եր հանդիսանում: XV Համագումարի վորոշումն իրավացիորեն հիշեցնում ե ալղ առիթով հիմնական մարքսիստական այն դրությունը, թե՝

«... կապիտալիստական հասարակության արդյունաբերությունը զարգանալու համար հենց վում ե ներքին շուկայի անպիսի կազմակերպման վրա, վորը կարող ե քայլաւել միջակ գյուղացիության հիմնական մասսաները, այն ե՝ կազմալուծել ալղ հիմնական խումբը՝ նրան պրոլետարականացնելով»:

Կապիտալիզմը վոչ միայն քայլաւում ե գյուղացիությունը, այլև գյուղում ամրացնում ե չքավորության բավական խոշոր տարբեր, վոր կապիտալիստական կապիտալիստական արդյունաբերության համար պահեստագոր ե կազմում:

«Ընդհակառակն, պրոլետարական դիկտատուրայի պայմաններում ներքին շուկա ստեղծելու պրոցեսսն արմատապես տարբերվում ե նրանից, վորը գյուղություն ունի կապիտալիստական հասարակության մեջ: Այստեղ շուկան զարգանում ե վոչ թե գյուղացիության հիմնական մաս-

սալի միացման և պրոլետարականացման շնորհիվ,
այլ միջակ գյուղացիության և գյուղական չքավո-
րության բարորության աճման շնորհիվ: Հենց
դրանով ել այլ բնույթ և տրված դասակարգային
տեղափոխություններին և դասակարգային վերա-
խմբավորումներին գյուղացիության մեջ»:

Դասակարգային տեղափոխությունների այդ նոր բնույ-
թը կայանում է առաջին հերթին միջակային տնտեսու-
թյունների միացման վճռական սահմանափակման մեջ:
Մյուս կողմից չքավորությունը, վոր շատ ավելի քիչ
և ընդունում իր շարքերում նոր քայլայվող տարրեր,
սկսում է ավելի ու ավելի արագ կերպով լիկվիդա-
ցիալի լենթարկել իր չքավորական դրությունը:

«Ժամանակակից գյուղի խոշորագույն բացա-
ստական գիծը, — ասում ե ԽՎ Համագումարի վո-
րոշումը, — մի գիծ, վորն արտահայտում է նրա
պատմական անցյալը և լերկրի ընդհանուր հե-
տամանցության մնացորդները, այսպես կոչվող
«ագրարային գերբնակչությունն» ե, այսինքն
«ավելորդ» բանվոր ձեռքերի այն մեծ քանակու-
թյունը, վոր զյուղում անելու հարմար գործ չի
ճարում և աչքի ընկնող չափով ավելացնում և
քաղաքի գործազուրկների թիվը»:

Մենք կարող ենք ցուց տալ, վոր դիկտատու-
րան վոչ միայն նախադրյալներ և ստեղծել լիկվիդա-
ցիալի լենթարկելու համար այդ «պատմական անցյալը»,
լերկրի ընդհանուր հետամանցության մնացորդներից
մեկը, այլ և գյուղում չքավորության պարզ վորոշվող
կրծատումն ենք տեսնում: Իսկ դա նշանակում է, վոր
«ագրարային գերբնակչությունը» հաղթահարելու առա-
ջին նշանավոր քայլերն արված են:

Մեր գյուղի զարգացման մըուս առանձնահատ-
կությունն այն է, վոր
«... հակառակ կապիտալիստական տիպի զար-
գացման, վոր արտահայտվում է միջին գյուղա-
ցիության քայլայմամբ ու թուլացմամբ ծայր
խմբերի—չքավորության և կուլակության աճման
հետ միասին, մեզ մոտ, ընդհակառակն, միջակ-
ների խմբի ուժեղացման պլոցես և տեղի ունե-
նում»:

Միջակների խմբի ուժեղացման այդ պլոցեսն,
ինչպիս տեսանք, արտահայտվում է վոչ միայն գյու-
ղացիության այդ հիմնական խմբի քանակի մեծանա-
լով, այլև արտադրության միջոցների և արտադրանքի
բաշխման մեջ նրա տեսակարար կշռի ավելանալովը:
Աճում է միջակային տնտեսությունների թիվը, ավե-
լանում և նրանց տեսակարար կշռը և դրա հետ միա-
սին մեր զյուղում տեղի է ունենում միջակային արն-
տեսության վոչ թե «թուլացումն», այլ ամրացումն:

Գյուղի չքավորական և միջակային խմբերի, վո-
րոնք հիմնականում ներկայացնում են մանր և ման-
րագույն տնտեսություններ, այդ խմբերի տեսակարար
բազույթը տեսությունը հարց և ծագեցնում գյուղի հե-
տագա զարգացման ուղիների մասին: Անհատական,
մասնավոր տնտեսության հետագա զարգացման ուղին
արդյոք ավելի ձեռնտու լի մեր զյուղի հիմնական մաս-
սաների համար: Այս եր ամբողջ սրությամբ ծա-
ռանում է այն հարցը, թե ինչի վրա լի հիմնված մանր
և մանրագույն տնտեսությունների բարվոք դրությու-
նը: Իր ընտանիքի բանվորական ուժի անխնա շահա-
գործումը, ամենաշուազ և ամենաանտես աշխատան-

քը տեղի ունի հենց մասը ու մանրագույն տնտեսությունների միջավայրում։ Այդ տնտեսությունների հետագա զարգացումը հենված է մեքենաներին, արտադրության ավելի կատարելագործված ձևերին, խոշոր տնտեսությանն անցնելու շահճառագործության վրա։ Խոշոր չափերով լեռեան լենող մենակ տնտեսությունների դուրս մղման զնող այդ անհատական տնտեսությունների կապիտալիստական ուժեղացման ուղին ընթանում է գյուղացիության ահագին մեծամասնության քայլացման հետ միաժամանակ։ Բնական ե, վոր այդ մեծամասնության շահը պահանջում է կոլեկտիվացման և կոոպերացման միջոցով ձեռք բերել տնտեսության ամրացում, դուրս գալ այն ստոր մակարդակից, վորի վրա յե գտնվում մեր գյուղի տնտեսությունների մեծամասնությունը։ Կոլեկտիվացումը, կոոպերացումը շերտավորման պրոցեսից դուրս են կորզում վերջին խարիսխը, տանելով հասցնելով տնտեսությունների ամրացմանն՝ առանց զարգացնելու նրանց սոցիալական հակասությունները, առանց արտադրության միջոցները մասնավոր սեփականատիրոջ ձեռքում կենտրոնացնելու։

Խորհրդագին գյուղի կոլեկտիվացումը և կոոպերացումը հաղթահարում են նրա շերտավորումը։

«Յեվ լեթե ինչպես հարկն ե ոգնենք գյուղի այժմյան աշխատավորներին, բարձրացրենք նրանց լեռանդը, նրանց ներշնչենք սոցիալիստական շինարարության իսկական խանդավառություն և բարձրացնենք հավատը ղեալի հողագործության մասսայական կոլեկտիվացման գործը, լեթե մենք

նոր խնդիրներն իրագործելու համար կամք ներշնչենք այն չբավորությանը, այն սակավազոր գյուղացիությանը և այն աշխատավոր-կուսակցականներին, վորոնք զտնվում են գյուղում և վորոնք անկասկած մեղանից ել շատ-շատ ավելի լեն զգում նոր խնդիրներին, հողագործության մեջ մասսայական կոլեկտիվ շինարարության անցնելու անհրաժեշտությունը, լեթե վերջապես այդ ուժերին ավելացնենք արհմիությունների ուժը և այն ել այնպես, վոր լուրաքանչչուր արհմիություն իր առաջնաերթ խնդիրների թվում դասի այդ նոր խնդիրները, — այն ժամանակ մենք մեր առաջ դրած խնդիրները կիրագործենք այնպես, ինչպես արժան է կոմմունիստներին, և կհասնենք ինչպես արժան է սոցիալիստներին։ Իսկ այդ նպատակն ե — սոցիալիզմի կառուցումը քաղաքում և գյուղում, մեր ԽՍՀՄ-ը սոցիալիստական հասարակություն դարձընելը»¹։



¹ Հեկեր Մոլոտովի XV համագումարում արված զեկուցման յեղափակման խոսքը։





974

4
18233

ԳԻՒԾ 25 ԿՈՊ.

ՀՀ 1
ՊԵ

| |
|-------|
| 321.9 |
| 9-26 |